

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգին ուղղված ծախսերի հիմնական նպատակը համակարգի ծառայողների կողմից հանրության համար առավել մատչելի, որակյալ և անաչառ ծառայությունների մատուցման համար նախադրյալների ստեղծումն է: Դրանց շարքին կարելի է դասել համակարգի ծառայողների ֆինանսական և իրավական պաշտպանվածությունն ապահովող երաշխիքների արմատավորումը:

ՀՀ արդարադատության նախարարության հիմնական խնդիրներն են.

ա) Հանրապետության օրենսդրության որակի բարձրացումը և օրենսդրության մեջ ներքին հակասությունների բացառումը.

բ) Դատաիրավական համակարգի հետագա զարգացումը, դատական համակարգի անկախության և հասարակության հանդեպ հաշվետվողականության ապահովումը.

գ) Արդարադատության ակադեմիայի գործարկման աջակցությունը, ներառյալ համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակումը, ինչպես նաև տեխնիկական աջակցության տրամադրումը.

դ) Քրեակատարողական հաստատությունների բնականոն աշխատանքի և հետագա էվոլյուցիոն բարեփոխումների ապահովումը, ներառյալ Արմավիր քրեակատարողական հիմնարկի առաջին մասնաշենքի շահագործումը՝ ԵԽ չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև քրեակատարողական ենթակառուցվածքի հետագա զարգացումը.

ե) Գործարար միջավայրի հետագա զարգացումը՝ քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների և լրացումների կատարումն ժամանակակից մոտեցումներին համապատասխանեցնելու նպատակով.

զ) Էլեկտրոնային քաղաքացիական ռեգիստրի (էլ. ՔԿԱԳ) համակարգերի հետագա զարգացումը՝ էլ ՔԿԱԳ համակարգի թղթային արխիվների թվայնացման շարունակականության ապահովումը.

է) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների կատարման բնականոն ապահովումը.

ը) Ամբողջությամբ ծրագրային բյուջետավորման համակարգին անցումն ապահովելը.

Ավարտին հասցնելը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի մշակման աշխատանքները, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը և մի շարք այլ իրավական ակտերի նախագծեր:

թ) Շարունակել բարեփոխումները քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես՝

թա) Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի համաձայն նոր քրեակատարողական օրենսգիրք մշակելը: Քրեական արդարադատությանն ուղղված բարեփոխումների իրականացումը պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգերում, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգերի սահմանումը:

թբ) քրեակատարողական ոլորտի բարեփոխումները, որոնք ուղղված են իրավական դաշտի վերանայմանը, օրենքների և ենթօրենսդրության կիրարկման կատարելագործմանը, ազատազրկված անձանց թվի կրճատմանը, ազատազրկման արժանապատիվ պայմանների երաշխավորմանը, նոր քրեակատարողական հիմնարկների կառուցմանը, ազատազրկվածների հետ տարվող սոցիալ-իրավական աշխատանքների շրջանակի ընդլայնմանը, կադրային ռեսուրսների կառավարման և վերապատրաստման, ինչպես նաև քրեակատարողական համակարգում աշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանը:

թգ) պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչների հստակեցումը: Միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկներում հացադուլ իրականացնող անձանց իրավունքներն ու պարտականությունները սահմանումը:

ժ) Քրեակատարողական համակարգից անկախ պրոբացիոն ծառայության արդյունավետ գործարկումը:

ի) Իրավական և համակարգային բարեփոխումների իրականացումը նաև նոտարական համակարգում, որոնք ուղղված կլինեն մատուցված ծառայությունների որակի բարձրացմանը և ծառայությունների մատուցման ժամկետների նվազեցմանը:

յ) Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում իրականացվող տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և հարկադիր կատարողի մի շարք գործառույթների ավտոմատացման գործընթացները, որպես առաջնային խնդիր դիտարկելով կատարողական վարույթների ժամկետների նվազեցումը և կատարողական թերթի վերացումը:

խ) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգում բարեփոխումների իրականացումը՝ ուղղված համակարգի թվայնացմանն ու ծառայությունների որակի բարձրացմանը:

ծ) Արդարադատության համակարգում իրականացվելիք բարեփոխումների ուղղություններից է նաև անվճար իրավաբանական օգնության ինստիտուտի կատարելագործումը:

Վերոհիշյալ խնդրիների իրագործման նպատակով 2016 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը պետական բյուջեից ֆինանսավորվել է հետևյալ ծրագրերի գծով.

- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարների աշխատակազմերի պահպանում/,

- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի պահպանում/,

- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում,

- Նախարարության <<Ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի պահպանում

- ՀՀ արդարադատության նախարարության <<Անձնական տվյալների պաշտպանության գործակալության>> պահպանում

- ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում,

- Փորձաքննությունների ծառայություններ,

- Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանում,

- Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանում,

- Քրեկատարողական համակարգի պահպանում,

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր,

- Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ,

- Թարգմանչական ծառայություններ,

- Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը,

- ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում,

- Վերապատրաստման ծառայություններ,

- Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ:

Այժմ անդրադառնանք նշված ծրագրերից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

#### **01.01.01.15 ՀՀ ԱՆ «Անձնական տվյալների պաշտպանության գործակալության» պահպանում**

Այս ծրագրով «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսվել է 22215.0 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 20325.0 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 16313.17 հազ. դրամ, դրամակղային և փաստացի ծախսը՝ 16176.1 հազ. դրամ:

Նախատեսված գումարներից տնտեսվել է 4148.9 հազ. դրամ, ինչը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ:

2016 թվականին այս ծրագիրը իրականացվել է առաջին անգամ:

**01.01.01.04 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում**

Նախարարների աշխատակազմերի մասով /01.01.01.04/ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել է 98228.90 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 100492.40 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 95104.93 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 93699.50 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 93699.50 հազ. դրամ: 2016 թվականի գործունեության արդյունքում այս ծրագրի գծով պարտքեր չեն առաջացել:

Նախատեսված գումարներից տնտեսվել է 6792.90 հազ. դրամ, ինչը պայմանավորված է ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ:

2015 թվականին նշված ծրագրով դրամակղային ծախսը կազմել է 106041.35 հազ. դրամ: 2016 թվականի դրամակղային ծախսը 2015 թվականի նկատմամբ նվազել է 10.3%-ով, ինչը պայմանավորված է 2016 թվականի ընթացքում որոշ ապրանքների և ծառայությունների գնման պահանջի վերացմամբ, ինչպես նաև ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ:

**01.01.01.05 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում**

Նախարարությունների աշխատակազմերի մասով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 1090059.80 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 1175569.80 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 1144213.00 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 1116706.54 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1114961.69 հազ. դրամ: Նախատեսված գումարներից տնտեսվել է 58863.26 հազ. դրամ, տնտեսված միջոցներից մոտովորապես 42% գոյացել է աշխատավարձի հողվածից, ինչը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ, իսկ 58%-ը գոյացել է 2016 թվականի ընթացքում որոշ ապրանքների և ծառայությունների գնման

պահանջի վերացմամբ, ինչպես նաև ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ:

«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով/» ծրագրի գծով 01.01.2017 թվականի դրությամբ կրեդիտորական պարտքը՝ 4811.06 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքերը պայմանավորված են այն հանգամանքով, որ 2016թ. դեկտեմբեր ամսվա հեռախոսակապի, ջրամատակարարման, բնական գազի և էլեկտրական էներգիայի մատակարարման ծախսի վճարումները կարող էին կատարվել միայն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց, այսինքն՝ դեկտեմբեր ամսվա կոմունալ ծախսերը ենթակա են վճարման փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

Նախարարությունների աշխատակազմերի մասով /01.01.01.05/ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 1030105.50 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը՝ 1002361.07 հազ. դրամ :

2015 թվականի նկատմամբ 2016 թվականի դրամարկղային ծախսի 10.2%-ի չափով աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2016 թվականի հոկտեմբերից ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հաշվեկշռին ամրացվեց ՀՀ պետական պրոբացիայի ծառայությունը:

**01.01.01.11 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման կարողությունների զարգացում /նախարարությունների աշխատակազմերի մասով/**

Այս ծրագրով «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսվել է 2000.0 հազ. դրամ արտասահմանյան գրականություն ձեռք բերելու նպատակով: Ֆինանսավորումը, դրամակղային ծախսը և փաստացի ծախսը կազմել է 240.08 հազ. դրամ: Ձեռք են բերվել երկու՝ հաշվապահական հաշվառման և համակարգչի օպերացիոն ծրագրեր:

Նշված ծրագրով 1759.92 հազ. դրամ տնտեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ անվանացանկով նախատեսված արտասահմանյան գրականության ձեռքբերման համար պայմանագրեր չեն կնքվել:

**01.03.01.03 ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում**

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է 321607.30 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 321478.20 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 317592.06 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 317433.39 հազ. դրամ: ՔԿԱԳ տարածքային բաժինների պահպանման ծախսերից 3886.14 հազ. դրամ վարչական տարածքների ղեկավարների կողմից 28.12.2016թ. ետ է վերադարձվել արդարադատության նախարարության համապատասխան հաշվին, որից էլ այն վերադարձվել է պետական բյուջե:

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 316001.74 հազ. դրամ:

**03.03.01.02 Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանում**

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 1417554.80 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 1416814.80 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 1349323.46 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 1347048.87 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1352737.87 հազ. դրամ:

2015 թվականին նշված ծրագրով դրամարկղային ծախսը կազմել է 1403458.94 հազ. դրամ: 2016 թվականի դրամարկղային ծախսը 2015 թվականի նկատմամբ



մոտովորապես նվազել է 4%-ով, ինչը պայմանավորված է 2016 թվականի ընթացքում որոշ ապրանքների և ծառայությունների գնման պահանջի վերացմամբ, ինչպես նաև ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ:

### **03.05.01.01 Քրեակատարողական համակարգի պահպանում**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնական խնդիրներն են՝ կազմակերպել քրեական պատիժների կատարման կապակցությամբ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և որոշումների կատարումը, կալանավորվածներին կալանքի տակ պահելը, ինչպես նաև դատապարտյալների և կալանավորվածների փոխադրումներին աջակցելը, քրեակատարողական հիմնարկներում օրինականության, այնտեղ պահվող ազատագրկվածների, ինչպես նաև դրանց տարածքում գտնվող անձնակազմի և քաղաքացիների անվտանգության, դատապարտյալների և կալանավորվածների կյանքի և առողջության պահպանման, անհատական, կրթական և մշակութային զարգացման պայմանների ապահովումը, դատապարտյալների և կալանավորվածների սոցիալ-հոգեբանական վերականգնումը, աջակցությունն իրավապահ մարմիններին՝ հանցագործությունների կանխարգելման և բացահայտման աշխատանքներում, ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գործունեության համակարգումը:

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի հիմնական խնդիրը կալանավորված և դատապարտված անձանց քրեակատարողական հիմնարկներում պահելու նյութական, ներառյալ՝ սննդամթերքով ապահովելու, կենցաղային, բուժապասարկման և այլ պայմանները մարդու իրավունքների ասպարեզում գոյություն ունեցող և համընդհանուր ընդունելության արժանացած միջազգային փաստաթղթերի դրույթներին և չափանիշներին համապատասխան իրականացնելն է՝ ելնելով Եվրոպայի խորհրդին անդամակցելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից, մասնավորապես Խոշտանգումների և անմարդկային կամ

արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով եվրոպական կոմիտեի (CPT) առաջին այցելության վերաբերյալ ներկայացված զեկույցում ներառված դիտողություններից ու առաջարկություններից:

Օրինակ՝ մինչ այժմ կալանավորված կամ դատապարտված մեկ անձին հատկացվում է 3.2քմ մակերեսով բնակելի տարածք, մինչդեռ վերոհիշյալ չափանիշներին համապատասխան՝ մեկ անձի հաշվարկով բնակելի տարածության նվազագույն չափը 4 քմ է:

Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալները հիմնականում բնակվում են հանրակացարանային պայմաններում, մինչդեռ պատժի անհատականացման սկզբունքն իրականացնելու անհրաժեշտությունը թելադրում է, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալները փոքր խմբերով պահվեն առանձին խցերում՝ հաշվի առնելով վերջիններիս համատեղելիությունը՝ յուրաքանչյուր խցում ապահովելով առանձնացված սանհանգույց և այլն: Բացի այդ, ֆինանսական միջոցների անբավարարության հետևանքով տարիներ շարունակ քրեակատարողական հիմնարկները կապիտալ վերանորոգուման չեն ենթարկվել, ինչի արդյունքում շենքերը գտնվում են անմխիթար վիճակում և կապիտալ վերանորոգման կարիք ունեն :

2016 թվականի ընթացքում քրեակատարողական համակարգի պահպանման ծրագրերում հիմնական գերակայությունը շարունակում են մնալ կապիտալ ծախսերը, որոնք ներառում են կապիտալ ակտիվների, ապրանքների ռազմավարական և արտակարգ պաշարների, ոչ նյութական ակտիվների ձեռք բերման համար նախատեսված ծախսերը՝ իր բաղկացուցիչ մասերով, կապիտալ ներդրումների ծախսեր՝ կապիտալ շինարարության, նախագծանախահաշվային և երկրաբանահետախուզական ծախսեր:

« 2016 թվականի պետական բյուջեի 03.05.01 «01.Քրեակատարողական համակարգի պահպանում» ծրագրով բյուջետային հատկացումների ճշտված պլանը կազմել է 8,676,393.6 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 8,486,409.95 հազար դրամ,

դրամարկղային ծախսը՝ 8,484,483.78 հազար դրամ: Դրամարկղային ծախսի շեղումը փաստացի ֆինանսավորման նկատմամբ կազմում է 1,926.17 հազար դրամ, որը տարեվերջին վերադարձվել է պետական բյուջե: Նշված ծրագրով 2015 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 10,339,652.3 հազար դրամ, որից 1,950,000.0 հազ. դրամը վերաբերում է նոր կառուցվող <<Արմավիր>> ՔԿ հիմնարկի կապիտալ շինարարության ավարտական աշխատանքներին:

2016 թվականին ՔԿ վարչությունը ֆինանսավորվել է նաև ՀՀ պետական բյուջեի 07.01.01 <<01.Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական հիվանդանոցային բուժօգնության ստացող և հատուկ խմբերի ֆիզիկական անձանց>> ծրագրով, որի տարեկան ճշտված պլանը կազմել է 43,000.0 հազար դրամ, ֆինանսավորումը՝ 33,728.55 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 33,728.55 հազար դրամ, 2015 թվականի 30,016.31 հազ. դրամի փոխարեն, որը պայմանավորված է 2016 թվականին պետական գնումներում մրցույթների կայացման արդյունավետությամբ:

Հանրակացարանային շենքերի մեծամասնությունը գտնվում է անմխիթար վիճակում և կարիք ունեն կապիտալ վերանորոգման: Բացի այդ, միջազգային պարտավորությունները կատարելու (Խոշտանգումների կոմիտեի զեկույցի հիման վրա) նպատակով անհրաժեշտ է հանրակացարանային տիպի շինությունները վերակառուցել խցային տիպի: 2008 թվականից կապիտալ վերանորոգումների գծով գումարներ չեն հատկացվել: Շատ ՔԿ հիմնարկների շենք-շինություններ կանգնած են անհետաձգելի կապիտալ վերանորոգումների խնդրի առջև, որոնց իրականացման հետաձգումը արդեն ժամանակի ընթացքում կպահանջի ավելի մեծ ֆինանսական ծախսեր:

Ամփոփ հաշվապահական հաշվետվությունը կազմված է քրեակատարողական ծառայության վարչության և 12 հիմնարկների հաշվետվությունների հիման վրա:

ՔԿ համակարգում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների սննդով ապահովման համար պահանջվող գումարները՝ ըստ ՔԿ վարչության ՄԺԾ ծրագրի Հայտի համաձայն /ՀՀ կառավարության որոշումներով սահմանված նորմաներով հաշվարկված/ տալու փոխարեն, 2016 թվականին պետբյուջեի ճշտված

պլանով հատկացվել է 997,008.8 հազ.դրամ՝ պլանավորված 4000 կերակրվող մարդ թվաքանակի համար, որը նույնքան է որքան նախորդ տարիներին: 2016 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող կերակրվող ազատազրկվածների միջին թիվը կազմել է 3800 մարդ, որոնց օրական հատկացվել է 595 դրամի սննդամթերք, որը հնարավորություն է տվել ազատազրկվածների սննդակարգում 100%-ով ապահովել հացի, բանջարեղենի, մակարոնեղենի, ձավարեղենի, աղի, թեյի, համեմունքների, բուսական յուղի անհրաժեշտ քանակները, իսկ պանրի 80.4%-ը, ձվի՝ 68%-ը, պահածոյացված մսի՝ 77.5%-ը, ձկան պահածոյի՝ 24.8%-ը, խտացրած կաթի՝ 69.3%-ը և մրգահյութի՝ 49.6%-ը:

2016թ ճշտված պլանի և դրամարկղային ծախսերի համեմատականը 2015թ. նկատմամբ տնտեսագիտական դասակարգման որոշ հոդվածների գծով ունի հետևյալ տեսքը.

	Բյուջետային ծախսերը տնտեսագիտական դասակարգման հոդվածներով		Ըձտված պլան	Դրամարկղային ծախս	Դրամարկղային ծախս	Շեղում	Տարբերություն
			2016թ.	2016թ.	2015թ.	Ճշտված պլանի և դր. ծախսի միջև	դրամարկղ. ծախսերի միջև
1	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված վճարներ	4111	6129706.3	6129706.3	6322472.7	0.0	-192766.4
2	Էլեկտրոններգիայի ծախսեր	4212	655086.5	654463.0	544664.7	623.5	109798.3
3	Ջրմուղ-կոյուղու վարձավճարի ծախսեր	4213	89163.0	84956.3	81624.1	4206.7	3332.2
5	Ներքին գործուղման ծախսեր	4221	14190.0	14190.0	14190.0	0.0	0.0
6	Սեփակ.տրանսպորտի պահպանման ծախսեր	4264	109625.0	102229.8	117895.1	7395.2	-15665.3
7	Դեղորայք և վիրակապային նյութեր	4266	33728.6	33728.6	30016.3	0.0	3712.3
8	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	1052615.7	908653.3	934833.4	143962.4	-26180.1
9	Արձակման նպաստ	4729	51100.0	51100.0	51100.0	0.0	0.0
10	Կապիտալ շինարարության ծախսեր	5112	200000.0	198792.9	1949621.8	1207.1	-1750828.9
11	Վարչական սարքավ. ձեռք բերման ծախսեր	5122	14940.0	13893.7	41505.2	1046.3	-27611.5
12	Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	7000.0	6957.5	3867.0	42.5	3090.5

<<Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված վճարներ>> հոդվածի պակասեցումը պայմանավորված 2016 թվականին << կառավարության N 950-Ն և N757-Ն որոշումների համաձայն կատարված փոփոխություններով:

Քրեակատարողական հիմնարկների համար ձեռք են բերվել 13893.69 հազ. դրամի էլեկտրատեխնիկական և կենցաղային սարքավորումներ:

<< 2016թ. պետական բյուջեի «Զինձառայողների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովում» ծրագրով 768 կենսաթոշակառուների կենսաթոշակների վճարման համար ներկայացվել է 879647.0 հազ. դրամի Հայտ, իսկ 104 հաշմանդամների և կերակրողին կորցնողներին՝ 25182.2 հազ. դրամի հայտ: 2016 թվականին թոշակավորված 95 քրեակատարողական ծառայողներին << կառավարության 2014 թվականի N1119-ն որոշման համաձայն հաշվարկվել է 69,393.2 հազար դրամի միանվագ դրամական օգնություն և վճարվել բյուջեով հատկացված 51,100.0 հազար դրամի:

2016թ. << պետական աշխատողներին սոցիալական փաթեթի ապահովության պետական ծրագրի շրջանակներում փաստացի հատկացված 150,215.7 հազ. դրամը լրիվությամբ իրացվել է:

### **01.06.01.03 Փորձաքննությունների ծառայություններ**

Ծրագրի նպատակն է ապահովել փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերումը պետական կարիքների համար՝ քրեական հետապնդման մարմինների որոշումների հիման վրա:

«<< 2016 թվականի պետական բյուջեի մասին» << օրենքով «Փորձաքննությունների ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 235918.00 հազ. դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 224422.40 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 224422.40 հազ.

դրամ: 2015 թվականին կատարվել է 145632.40 հազ. դրամ դրամարկղային ծախս: Աճը 2015 թվականի համեմատ պայմանավորված է փորձաքննությունների քանակի աճով:

### **03.03.02.02 Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանում**

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն ցույց տված փաստաբանների վարձատրության նպատակով 2016 թվականին նախատեսվել է 377272.10 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 377272.10 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային 377272.10 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 374516.23 հազ. դրամ: 2015 թվականին գոյացած 4782.69 հազ. դրամ կրեդիտորական պարտքը 2016 թվականի ընթացքում մարվել է փաստաբանների պալատի կողմից:

2015 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 290834.20 հազ. դրամ: 2016 թվականի դրամարկղային ծախսի աճը 29.7% 2015 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ պայմանավորված է 5 հանրային պաշտպանների ավելացմամբ, ինչպես նաև 2015 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-145-Ն օրենքով փոփոխություններ են կատարվել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում, որով հանրային պաշտպանի աշխատավարձի հաշվարկման համար սահմանվել է նոր գործակից (2015 թվականի 5.5-ի փոխարեն սահմանվել է 6.5):

### **08.03.02.07 Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական**

#### **ծառայություններ**

Այս ծրագրով նախատեսված գումարներով իրականացվում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության

գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) ու «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության գործունեության ընթացքում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերման, ինչպես նաև «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները:

2016 թվականին «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 378108.10 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 347372.40 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 345901.70 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 348147.99 հազ. դրամ:

2015 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 368997.01 հազ. դրամ: 2016 թվականի հուլիսի 21-ի թիվ 757-Ն ՀՀ կառավարության որոշմամբ նշված ծրագրից կրճատվել է 30680 հազ. դրամ, ինչով էլ պայմանավորված 2016 թվականի դրամարկղային ծախսը 2015 թվականի համեմատ նվազել է:

### **01.01.01.13 «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանում**

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 21143,0 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 20759,16 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 20413,59 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 20403.61 հազ. դրամ: Բյուջեի կատարողականը դրամային արտահայտությամբ կազմում է նախատեսված տարեկան բյուջեի 98%:

Թերի իրացումների հիմնական պատճառները հետևյալն են՝

աշխատանքի վարձատրության հոդվածով՝ չիրացված գումարը կազմել է 345,6 հազ. դրամ: Չիրացված գումարը գոյացել է թափուր թեղերի ժամանակավոր առկայության պատճառով:

շարունակական ծախսերի հոդվածով՝ չիրացված գումարը կազմել է 17,5 հազ. դրամ: Կապի ծառայության դեկտեմբեր ամսվա գումարի վճարումը տեղափոխվել է հաջորդ տարվա հունվար ամսին:

պայմանագրային ծառայությունների ձեռքբերման հոդվածով՝ չիրացված գումարը կազմել է 79,1 հազ. դրամ: Կոմպյուտերային և ներկայացուցչական ծախսերը ամբողջովին օգտագործելու կարիք չի ծագել:

ընթացիկ նորոգման և պահպանման հոդվածով՝ չիրացված գումարը կազմել է 206,1 հազ. դրամ: Մեքենայի նորոգման կարիք չի ծագել:

նյութեր և այլ ծախսեր հոդվածներով՝ չիրացված գումարը կազմել է 70,1 հազ. դրամ: Առկա նյութերը բավականացրել են գրասենյակի գործունեության համար:

հարկերի, պարտադիր վճարների և տույժերի հոդվածներով՝ չիրացված գումարը կազմել է 11,0 հազ. դրամ: Համապատասխան ծախսեր չեն առաջացել:

«ՎՎ 2015 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 23890,80 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 21989,73 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 21 988,07 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 22028,07 հազ. դրամ: Բյուջեի կատարողականը դրամային արտահայտությամբ կազմել էր նախատեսված տարեկան բյուջեի 92%:

**03.03.01.09 Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Փաստաբանների դպրոցի վերապատրաստման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2016թ. կատարված ծախսերի ամփոփ հաշվետվություն**

«ՎՎ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Փաստաբանների դպրոցի վերապատրաստման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի



իրականացման համար նախատեսվել է ընդհանուր 56397,1 հազ. դրամ, որից՝ 40994,1 հազ. դրամը դրամաշնորհային միջոցներից և 15403,0 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից: Ծրագրի դրամարկղային ծախսը կազմել է ընդհանուր 45904.0 հազ. դրամ, որից՝ 37089,2 հազ. դրամը դրամաշնորհային միջոցներից (7520,0 հազ. դրամ սարքավորումների, 29569,2 հազ. դրամ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար) և 8814,81 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից (1504,0 հազ. դրամ սարքավորումների, 7310,8 հազ. դրամ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար): Բյուջեի կատարողականը դրամային արտահայտությամբ կազմում է նախատեսված տարեկան բյուջեի 81%:

Թերի իրացումների հիմնական պատճառն ծրագրի իրականացման ընթացքում կուտակված խնայողություններն են:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է ընդհանուր 260928,0 հազ. դրամ, որից՝ 217440,0 հազ. դրամը դրամաշնորհային միջոցներից և 43488,0 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից: Ծրագրի ֆինանսավորումը կազմել էր 221572,58 հազ. դրամը դրամաշնորհային միջոցներից և 30392,0 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից: Ծրագրի դրամարկղային ծախսը կազմել էր 182599,3 հազ. դրամը դրամաշնորհային միջոցներից և 29287,0 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից: Բյուջեի կատարողականը դրամային արտահայտությամբ կազմել էր նախատեսված տարեկան բյուջեի 81%:

#### **08.03.02.09 Թարգմանչական ծառայություններ**

2016 թվականին «Թարգմանչական ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 217499.40 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 217468.50 հազ. դրամ: Թարգմանվել է 25749 էջ:

2015 թվականին «Թարգմանչական ծաայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 185903.60 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 185903.60 հազ. դրամ: Թարգմանվել է 21871 էջ:

#### **09.05.02.04 ՀՀ արդարադատության նախարարության հատուկ**

##### **ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում**

«ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի գծով 2016 թվականին նախատեսվել է 345169.80 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 332549.70 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 332546.10 հազ.դրամ: Գումարը նախատեսվում է ելնելով վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակից, ինչպես նաև դասընթացների տևողությունից:

2016 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 2525 մարդ: 2016 թվականին մեկ դասընթացի տևողությունը եղել է 72 ակադեմիական ժամ: Դասընթացի արժեքը նվազել է:

«ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի գծով 2015 թվականի ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 344259.07 հազ. դրամ: Գումարը նախատեսվում է ելնելով վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակից: 2015 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 2523 մարդ:

#### **01.01.03.04 Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ**

2016 թվականին «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» ծրագրի գծով ֆինանսավորումը կազմել է 25389.91 հազ. դրամ, իսկ դրամարկղային և փաստացի ծախսերը՝ 24747.68 հազ. դրամ, 2015 թվականին այս ծրագրի գծով ֆինանսավորումը կազմել է 23414.12 հազ. դրամ, իսկ դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 22851.60 հազ. դրամ:

### **01.01.03.03 Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն**

2016 թվականին «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն» ծրագրի գծով ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը՝ 6231.33 հազ. դրամ:

### **09.05.01.13 Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը**

2016 թվականին «Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը» ծրագրի գծով նախատեսվել է 24394.60 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 23166.60 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսերը 23166.60 հազ. դրամ իսկ փաստացի ծախսը կազմել է 25421.80 հազ. դրամ:

2015 թվականին «Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը» ծրագրի գծով նախատեսվել է 24988.50 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսերը 24988.50 հազ. դրամ իսկ փաստացի ծախսը կազմել է 23992.30 հազ. դրամ :

### **09.05.01.18 Ներդրումներ <<իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն>> ՊՈԱԿ-ում**

2016 թվականին <<Ներդրումներ <<իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն>> ՊՈԱԿ-ում>> ծրագրի գծով նախատեսվել է 580.10 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 420.00 հազ. դրամ: Այս ծրագիրը 2016 թվականին իրականացվել է առաջին անգամ: Ծրագրի նպատակն էր կատարել ներդրումներ իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության հաստատություններում:

### **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ 11.01.01.01**

2016 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախարարությանը նախատեսվել է 50138.10 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 50138.10 հազ. դրամ, դրամարկղային ծախսը 50138.10 և փաստացի ծախսը կազմել է 50559.80 հազ. դրամ: Ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 2016 թվականի հատկացումների մասին տեղեկանքը.

N	Որոշման համարը, ամիս, ամսաթիվ	Նպատակը	Նախատեսված	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս
1	166-Ա 25.02.2016թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	2686.82	2686.82	2686.82
2	376-Ն 15.04.2016թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	1617.57	1617.57	1617.57
3	377-Ն 15.04.2016թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	1617.57	1617.57	1617.57
4	524-Ն 26.05.2016թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	1959.23	1959.23	1959.23
5	525-Ն 26.05.2016թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	1959.23	1959.23	1959.23
6	526-Ն 26.05.2016թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	1963.21	1963.21	1963.21
7	730-Ն 14.07.2016թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	1918.69	1918.69	1918.69
8	780-Ն 29.07.2016թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	26729.5	26729.5	26729.5
9	845-Ն 18.08.2016թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	9686.28	9686.28	9686.28
<b>Ընդամենը</b>			<b>50138.10</b>	<b>50138.10</b>	<b>50138.10</b>

**10.09.02.02 Պետական հիմնարկների և կազմակերպությունների  
աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում**

2016 թվականին «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծախսային ծրագրով ՀՀ արդարադատության նախարարության համակարգի աշխատակիցների համար նախահաշիվը կազմել է 225576.00 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 209921.67 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 208951.10 հազ. դրամ: Նշված ծրագրով գումար է տնտեսվել թափուր հաստիքների շարժունակության հաշվին:

2015 թվականին վերը նշված ծրագրով ՀՀ արդարադատության նախարարության համակարգի աշխատակիցների համար ճշտված նախահաշիվը կազմել է 200784.00 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 198889.08 հազ. դրամ: 2015 թվականի նկատմամբ 2016 թվականի դրամարկղային ծախսի 10.2%-ի չափով աճը պայմանավորված է այն հանգամանքով 2016 թվականի հոկտեմբերից ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հաշվեկշռին ամրացվեց ՀՀ պետական պրոբացիայի ծառայությունը:

**09.05.02.09 Վերապատրաստման ծառայություններ**

Այս ծրագրի նպատակն է դատական ծառայողների և դատախազության աշխատակազմի պետական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման ապահովում:

2016 թվականին նախատեսվել է 253434.40 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 253225.00 հազ. դրամ: ֆինանսավորման և դրամարկղային ծախսը կազմել է 248084.60 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 319960.58 հազ. դրամ: 2014-2015 թվականներին չօգտագործված 108449.40 հազ. դրամը <<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ-ի կողմից ետ է փոխանցվել պետական բյուջե 2016 թվականին:

2015 թվականին <<Վերապատրաստման ծառայություններ>> ծրագրով նախատեսվել է 267437.00 հազ. դրամ: Ֆինանսավորման և դրամարկղային ծախսը կազմել է 267437.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 213441.10 հազ. դրամ:

**09.05.02.10 Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ**

2016 թվականին նախատեսվել է 64620.00 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 22613.32 հազ. դրամ:

Քանի որ 2016 թվականի ունկնդիրների քանակը որոշվում է, 2015 թվականի ընթացքում հանձնված քննությունների արդյունքում, ինչի հիման վրա էլ 2016 թվականին նախատեսվել է 30 ունկնդիր: Սակայն 2016 թվականին նախատեսված 30 ունկնդրի փոխարեն մասնագիտական վերապատրաստում են անցել 18 ունկնդիրներ, որից 9 դատավորների թեկնածությունների ցուցակում ընգրկված անձինք ավարտել են ս.թ. հունիսի 17-ին /վերջիններիս ուսումնառությունն սկսվել էր 2015 թվականին/:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընգրկված 9 անձանցից մեկը << զլխավոր դատախազի 14.06.2016թ.թիվ 172-Ա հրամանով հանվել է ցուցակից:

2015 թվականին նախատեսվել է 64620.00 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 42019.76 հազ. դրամ:

2016 թվականի դրամարկղային ծախսը 2015 թվականի նկատմամբ 46.2%-ով նվազել է, քանի որ 2016 թվականի ընթացքում ուսումնառություն ստացած 9 դատավորների թեկնածուները և 1 դատախազների թեկնածուն կրթաթոշակ են ստացել 6 ամսվա համար:

<< արդարադատության նախարարությունը ունի չորս **արտաբյուջետային հաշիվ**:

Արդարադատության նախարարության **01.01.01.16** արտաբյուջետային հաշիվը բացվել է Հայաստանի հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի թիվ 860-Ն որոշմամբ, որով հաստատվել է իրավաբանական անձանց պետական

գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման հետ կապված լրացուցիչ վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը: <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում արտաբյուջետային միջոցների հաշվին>> ծրագրի նախահաշիվը հաստատվել է 2012 թվականի ապրիլի 12-ի թիվ 420-Ն և 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1334-Ն որոշումների համաձայն: 01.01.2016թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 4686.93 հազ. դրամ, 2016 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 220117.91 հազ. դրամ, ծախսը կազմել է 204682.92 հազ. դրամ, 01.01.2017թ. մնացորդը կազմել է 20121.93 հազ. դրամ: Նշված ծրագրով 2015 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 196315.69 հազ. դրամ: 2016 թվականի ծախսի աճը 2016 թվականի նկատմամբ պայմանավորված է արտաբյուջետային հաշվի մուտքերով /2015 թվականին արտաբյուջետային հաշվին մուտքագրվել է 200478.32 հազ. դրամ, իսկ 2016թ-ին 220117.91 հազ. դրամ:

Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգման անցկացման ժամանակ թարգմանությունների ճշտությունն ստուգող փորձագետների փորձագիտական աշխատանքի դիմաց վճարումները դիմորդների կողմից ստանալու և փորձագետներին տալու նպատակով ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 393-Ա որոշման համաձայն թիվ 1 գանձապետական բաժանմունքում բացվել է արտաբյուջետային հաշիվ: 2016 թվականի այս արտաբյուջետային հաշվի համար նախահաշիվ չի հաստատվել: 2016 թվականին այս արտաբյուջետային հաշվին դրամական մուտքեր չեն եղել: 01.01.2017 թվականի դրությամբ հաշվի մնացորդը կազմել է 36.37 հազ. դրամ:

ՀՀ արդարադատության նախարարության **01.01.01.18** արտաբյուջենային հաշվի բացումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016թ. օգոստոսի 25-ի թիվ 858-Ն որոշմամբ, որով հիմնադրվել է ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը:

«Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ստեղծման գաղափարը իրականություն է դարձել ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորման արդյուքում: 2016 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը, ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) երևանյան գրասենյակի առաքելության տնօրեն Դեբորա Գրիգերը ստորագրել են Թիվ AAG-111-G-13-001 Ջարգացման Համագործակցության համաձայնագրի իրականացման նամակ թիվ 15 համաձայնագիրը:

ԱՄՆ ՄԶԳ համապատասխան ֆինանսավորումը ստանալու և միջազգային կազմակերպությունների կողմից օժանդակվող ծրագրերին տրամադրվող գումարների շրջանառությունն ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 981-Ա որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունքում բացվել է ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների նոր հաշիվ:

«ՀՀ արդարադատության նախարարության և ԱՄՆ ՄԶԳ-ի միջև 2016 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված AAG-111-G-13-001 Ջարգացման համագործակցության համաձայնագրի ներքո իրականացվող» դրամաշնորհային ծրագրի նախահաշիվը հաստատվել է 2016 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 1095-Ն որոշման համաձայն: 2016 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 7616.68 հազ. դրամ, ծախսը կազմել է 1430.00 հազ. դրամ, 01.01.2017թ. մնացորդը կազմել է 6186.68 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 705-Ա որոշման համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում բացվել է



**03.05.01.02** արտաբյուջետային հաշիվ՝ Եվրոպայի խորհրդի կողմից <<Էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորումների փորձարկում քրեակատարողական հիմնարկների պիլոտային ստորաբաժանումներում>> ծրագիրն իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային միջոցների տնօրինման համար: Այս ծրագրի նպատակն է փորձարկել էլեկտրոնային մոնիթորինգի տեխնոլոգիաների կիրառումը իրավախախտների և դատավարության սպասող ամբաստանյալների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

<< կառավարության 2016 թվականի մարտի 24-ի N301-Ն որոշմամբ դրամաշնորհային ծրագրի իրականացման համար նախատեսվել է ընդհանուր 22758,0 հազ. դրամ: Ծրագրի դրամարկղային ծախսը կազմել է 2470,0 հազ. դրամ: Գնվել են սարքավորումներ և տոներային քարտրիջներ: Ծրագրի իրականացումը տեղափոխվել է 2017 թվական:

<< կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N1223-Ն որոշմամբ դրամաշնորհային ծրագրի իրականացման համար նախատեսվել էր ընդհանուր 27355,0 հազ. դրամ: Ծրագրի ֆինանսավորումը կազմել էր 22916,7 հազ. դրամ: Ծրագրի դրամարկղային ծախսը կազմել էր 4088,3 հազ. դրամ:

<< արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) արտաբյուջետային միջոցները գոյանում են (բռնագանձվում են) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» << օրենքի 67 և 68-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Համաձայն << կառավարության 03.04.1999թ. թիվ 205 որոշման Ծառայության (նախկինում՝ ԴԱՀԿ ապահովող վարչության) և մարզային ստորաբաժանումների համար բացվել են դեպոզիտային հաշիվներ վերը նշված գումարների մուտքագրման և բաշխման նպատակով: << կառավարության 10.06.1999թ. թիվ 404 որոշմամբ սահմանվել է նշված հաշիվներում գոյացած միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը, այնուհետև 03.02.2000թ. փոփոխություն է կատարվել << կառավարության 10.06.1999թ. թիվ 404 որոշմամ մեջ և սահմանվել է, որ << ԱՆ ԴԱՀԿ ապահովող

ծառայության և նրա մարզային ստորոբաժանումների համար բացված հաշիվները տնօրինվում են առանց նախահաշիվների: ՀՀ կառավարության 2005թ. թիվ 2275-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման կարգը:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ նշված ֆոնդի մնացորդը կազմել է 4,643.51 հազ.դրամ, 2016թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը մուտքագրվել է 1,373,971.60 հազ.դրամ, նույն ժամանակահատվածում ծախսերը կազմել են 1,329,180.5 հազ.դրամ և մնացորդը առ. 01.01.2017թ. կազմել է 49,434.6 հազ.դրամ:

Կից ներկայացվում է նաև 2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից եկամուտների հավաքման մասին հաշվետվությունը: Ներկայացված հաշվետվության մեջ ստացված եկամուտների տարբերությունը ծրագրային ցուցանիշներից կայանում է նրանում, որ հաշվետվության մեջ արտացոլվել են 2016 թվականին ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից փաստացի կատարված գործողությունների դիմաց գանձված տուրքերի և եկամուտների գումարները: 2015 թվականի համեմատությամբ հավաքված եկամուտների տարբերությունը պայմանավորված է փաստացի կատարված գործարքների քանակով:

**ՀՀ արդարադատության նախարարության  
աշխատակազմի ղեկավար՝**

**Ա. Գևորգյան**

**Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ-  
Գլխավոր հաշվապահ՝**

**Ա. Խաչատրյան**